

## ԷԼԼԱԴԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԻՄՆԱՆՆԵՐԸ ԵՎ ՇԱՅ  
ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՆՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դարաշրջանի փոփոխման հետ զուգընթաց մարդկանց մտա  
ձևավորվում է նոր մտածողություն, երևույթների գնահատման նոր  
չափանիշներ: Սկսված է մի գործընթաց, երբ իրողությունները բանա-  
կանության կողմից յուրովի են գնահատվում: Մտաբերենք Ի. Կանտի  
խոսքերը. «Փաստերն աստվածային են, կարծիքներն ազատ»:

Նման դիրքորոշումն առավել հատկանշական է մշակույթի հետ  
առնչվող խնդիրների քննության պարագայում, երբ փաստերն ավելի  
հաճախ են ենթարկվում տարատեսակ մեկնաբանությունների:

Ներկայում առաջնային խնդիր է հայ մշակույթի անցած պատմա-  
կան ուղու, նրա յուրահատկության բացահայտումը համաշխարհային  
քաղաքակրթության համատեքստում: Մերուղիների կուտակած փորձը  
կանխորոշում է մշակույթի զարգացման հիմնական ուղեգիծը, թեմա-  
տիկան և խնդիրները, ժանրային և կերպավորման համակարգը: Այդ  
ամենը ծառայում է ազգի հոգևոր հարստացմանը, հայրենասիրության  
ու բարոյական նկարագրի ձևավորմանը: Մշակույթի ոլորտում հրա-  
պարակախոսության խնդիրը ոչ թե հասարակությանը սուսկ գիտե-  
լիքների փոխանցումն է, այլ մարդկանց ազգային գաղափարի շուրջ  
համախմբումը: Ցանկալի է, որ նման մտտեցումը լինի տևական և  
չպայմանավորվի այս կամ այն քաղաքական ելևէջներով:

Հայաստանում հրապարակախոսության բնորոշ յուրահատկու-  
թյունն է դարձել ազգային գաղափարախոսության քարոզչությունը  
պայմանավորել ժամանակի թելադրանքով, կուսակցական շահերով,  
քաղաքական դիրքորոշումով և այլն: Պետք է գործի այն գիտակցույթու-  
նը, որ ազգային գաղափարախոսության հիմքում ընկած է ազգի միաս-  
նական մտտեցումը սեփական ժողովրդի հիմնարար նպատակների և  
դրանց իրականացման ուղիների վերաբերյալ: Ուստի, պարբերական-  
ներում մշակույթի հիմնահարցերի քննության գնահատման ուղենիշը  
պետք է լինի ազգային գաղափարը:

Արդի հայ հրապարակախոսության առաջնային դերը ոչ միայն կրթամշակութային առաքելության իրականացումն է, այլև մեր ազգի տարբեր հատվածների մշակութային կողմնորոշումներն ազգանպաստ հիմքի վրա միասնականացնելը:

Թեմատիկայի առումով արդի հրապարակախոսությունը, ինչպես և կարելի է ենթադրել, էսպես տարբերվում է նախորդ ժամանակաշրջաններից, իսկ ժանրային առումով տարբերությունները զգալի չեն: Այսպես, վերջին երկու տասնամյակում վերածնունդ ապրեց 19-րդ դարի երկրորդ կեսին տարածում գտած հրապարակախոսական բանավեճային ժանրը, առաջնորդող հողվածը՝ նվիրված օրվա հրատապ խնդիրներին, նամակը, այսինքն՝ որևէ հեղինակի հրապարակային դիմումը ինչ-որ հասցեով և այլն: Բնարկե, առկա են և էսկան տարբերություններ: 19-րդ դարավերջին քննարկման առանցքային հարցերն էին հայ ազատագրական պայքարը, ինչպես նաև գրական տարբեր ուղղությունների հետևորդների միջև ծավալվող բանավեճերը: Խորհրդային ժամանակաշրջանում բանավեճերի առանցքը տիրապետող համակարգի կատարելագործման, սերունդների գաղափարական դաստիարակության առավել արդյունավետ ձևերի ընտրության խնդիրներն էին:

Ներկայումս բանավեճերը ծավալվում են գերազանցապես սոցիալ-տնտեսական, քաղաքական և մասնակիորեն մշակութային խնդիրների շուրջը: Հայաստանյան թերթերը մշակույթի հիմնախնդիրները, որպես կանոն, ներկայացնում են հրապարակախոսական մեկնաբանությամբ: Բացառություն չի կազմում նաև «Իրավունք» թերթը՝ իր էջը տրամադրելով արվեստագետ Լ. Մույսաֆյանին: Ըստ նրա մշակույթի ոլորտում գերիշխում են քաղաքականային շտուկները, որից տուժում է ազգային մշակույթը, «որև առանց այն էլ վերջին տարիներին անընդհատ ցնցումներ է ապրում կիսատ-սյուստ նախարարների և անգրագետ կառավարիչների պատճառով»<sup>1</sup>:

Հոդվածագիրը ստեղծված իրավիճակի համար գլխավոր մեղքը տեսնում է մշակույթի նախարարության գործունեությունում: «Իրավունքի» հրապարակումը կունենար հասարակական հեղեղություն, եթե նրա հիմքում ընկած չլիներ գլխավորապես անձնական դրդապատճառները: Մի կողմից նա ամեն կերպ խարազանում է մշակույթի նախարարին, իսկ մյուս կողմից զովերգում արվեստի բնագավառի որոշ անձանց, որոնց բարոյական կերպարը կասկածանք է առաջացնում:

<sup>1</sup> Տե՛ս, «Իրավունք», 12-15 դեկտեմբերի, 2008թ.

Մշակույթը բոլոր ժամանակներում փորձել են ներկայացնել ապաքաղաքական, թեև փաստարկները համոզիչ չեն: Մշակույթի հետ առնչվող հարցերը կրթեմն դառնում են խիստ բախումների և անգամ ժողովուրդների միջև հակամարտության առիթ: Այդպիսի իրավիճակ ստեղծվեց Վրաստանում հայկական եկեղեցիների պղծման և վրացականի վերածելու քաղաքականության հետևանքով: Տեսական լուրջությունից հետո առաջին անգամ Հայաստանի հասարակությունն արձագանքեց այդ վանդալիզմի դրսևորմանը: «Նովոյե Վրեմյա» թերթը հրապարակախոսական հիմնախնդրային հողվածում վերլուծեց մեր հակրության տեսակետն այս իրողության նկատմամբ: Հողվածագիրն եզրահանգում է՝ հայ մշակույթի և առանձնապես կրոնական շինությունների նկատմամբ վրացիների ոտնձգությունները հիշեցնում են «թուրք և ադրբեջանցի հարևանների վարքագիծը, որոնց համար պատերազմն եկեղեցու բեմերի և գերեզմանաքարերի հետ պատմությունում գոյատևելու կենսական ձև է»<sup>2</sup>:

Հողվածում դրսևորվում է որոշակի զգուշավորություն՝ հակահայկականության դրսևորման մեղքը բարդելով ասկ անկատավարելի բնավորություն ունեցող վրացի եկեղեցականի վրա: Սակայն հողվածի ոգին այնպիսին է, որ կասկած չի թողնում Վրաստանում պետականորեն հակահայկական քաղաքականության իրականացման մասին, ինչը վկայում են նաև Ջավախքում ծավալվող իրադարձությունները:

Հրապարակախոսական նյութերից, թերևս, ամենից հրատապը հայոց լեզվի մաքրության խնդիրն է, որը պարբերաբար քննարկվում է մամուլում: Վերջին տաս տարիներին «Հայաստանի Հանրապետություն», «Ազգ», «Առավոտ», «Հայկական ժամանակ» թերթերը ստեպստեպ անդրադառնում են հեռուստատեսության և ռադիոյի հաղորդումների լեզվին, քննադատաբար մեջբերումներ կատարում էրթերից հնչող լեզվական աղավաղումներից: «Հայաստանի Հանրապետությունը», տպագրելով լեզվի պետական տեսչության պետ Լ. Սիրզոյանի ընդարձակ հողվածը, ընթերցողներին բանավեճի հրավիրեց հայոց լեզվի մաքրության, այս խնդրում հասարակական և պետական հոգացողության բարձրացման անհրաժեշտության վերբերյալ<sup>3</sup>: Հրապարակումն ունեցավ հասարակական հնչեղություն: Խմբագրությանը հղած նամակներում տարբեր մասնագիտությունների տեր մարդիկ մտահո-

<sup>2</sup> Տե՛ս, «Новое Время», 9 декабря, 2008г.

<sup>3</sup> Տե՛ս, «Հայաստանի Հանրապետություն», 21 հունիսի, 2002թ.:

գություն արտահայտեցին լեզվի ոլորտում առաջացած խնդիրների նկատմամբ, առանձնակի վրդովմունք են առաջացնում հեռուստաթերից հնչող վատ հայերենով հաղորդումները, առևտրի և կենցաղ-սպասարկման օբյեկտների օտար լեզվով անվանումները:

Հայոց լեզվի անադարտության պահպանումը հրատապ է նաև սփյուռքում ապրող մեր հայրենակիցների համար՝ որպես ազգապահպանության կարևորագույն գործոն: «Առավոտ» թերթը «Հայաստանցիները գիջում են սփյուռքահայերին» ինֆորմացիոն հոդվածում, փաստերի լայն շրջանակների վկայակոչմամբ, ամփոփում է հայոց լեզվի և գրականության համահայկական 3-րդ օլիմպիադայի և Հայագիտական գիտելիքների մրցույթի արդյունքները. «Միրիայի հայ աշակերտները բանավոր խոսքից ամենապատրաստվածն էին, իսկ ռուսաստանցիները՝ հակառակը»<sup>4</sup>:

Ամեն ժողովրդի համար, որն իր ներդրումն ունի համաշխարհային քաղաքակրթության ասպարեզում, դարակազմիկ երևույթ է սեփական գրի հոբելյանը: Մովորաբար այն դառնում է ոչ միայն մշակութային իրադարձություն, այլև հայրենասիրության դաստիարակման և ազգի համախմբման կարևոր ազդակ: Նման մոտեցում է ձևավորվել անգամ այն երկրների ժողովրդների մոտ, որոնք, եթե չեն էլ ստեղծել սեփական այբուբենը, ապա տոնակատարություն են կազմակերպում ուրիշի ստեղծածը սեփական մշակույթում ներդնելու կապակցությամբ: Այսպես, հարևան Թուրքիայում տոնախմբությամբ նշեցին 1920-ական թվականների վերջին արաբականից լատինական այբուբենին անցնելը:

Ցավալի է, որ հայոց գրերի 1600-ամյակը չդարձավ խոշոր կրթամշակութային և քաղաքական երևույթ: Հանրապետության թերթերում տպագրվեցին ընդամենը մի քանի հոդվածներ, որոնք էլ լայն արձագանք չգտան հանրության շրջանում: Կարելի է առանձնացնել «Ուխտագնացություն դեպի Հայաստան» հիմնախնդրային հոդվածը, որում քննության է առնվում հայոց գրերի ստեղծման և 1600-ամյա տարելիցի նշանակությունը հայ ժողովրդի հոգևոր հարստացման համար:

Հոդվածը նկարագրում է Կանադայի հայոց թեմի, Կանադայի անգլիական եկեղեցու ղեկավարների համատեղ այցը Հայաստան: Կանադահայ թեմի եպիսկոպոսն ընդգծում է հայոց գրերի ստեղծման բացառիկ նշանակությունը համայն հայության համախմբման համար:

<sup>4</sup> Տե՛ս, «Առավոտ», 21 սեպտեմբերի, 2007թ.:

այդ նպատակին անհրաժեշտ է ծառայեցնել նաև 1600-ամյա հոբելյանը: Նա եզրահանգում է. Կարևորը «ոչ թե տոնակատարողական ձևերեն, այլ կանադական հասարակությանն այդ խոշոր երևույթին ծանոթացնելը: Այսինքն՝ պետք է ցույց տալ, որ նույն հասարակության մեջ ապրում է նման պատմություն ունեցող ժողովուրդ»<sup>5</sup>:

Արդի հայ հասարակությունը նախորդից տարբերվում է երևույթների ոչ միանշանակ, հաճախ հակասական գնահատումներով:

Ներկայումս հրապարակային բանավեճերը հաճախ վեր են ածվում անզիջում բախումների: Գաղափարական հակադրությունը, որ բնորոշ էր նախորդ դարաշրջանին, իր տեղը զիջել է անձնական հակամարտությանը՝ խառնաշփոթ իրավիճակ առաջացնելով անգամ մշակույթի հիմնահարցի քննության ժամանակ: Մտեղծվում է տպավորություն, որ մենք, հրաժարվելով անցյալի անգամ դրական արժեքներից, չենք կարողանում ստեղծել նրանց նոր համարժեքը:

2. Թեյլորը գրում է. «Մշակութային օրյեկտները», ինչպես և «սոցիալականները» անհնարին է ռեֆորմացնել՝ նրանք ավերվում են, ոչնչացվում, քանի որ վերանում է դիցաբանությունը, որը ժամանակին ապահովել էր նրանց օրինականությունը: Եթե նման ռեֆորմները ձեռնարկվել են բազմիցս, ապա արժեքի փոխարեն հաճախ մնում է միայն պատյանը, որը համեմատաբար հեշտ է լցնել նոր բովանդակությամբ: Եթե ավանդույթը երկարատև ժամանակով պահպանվում է գրեթե անփոփոխ, ապա մյուս արժեքները հանգում են բախումների<sup>6</sup>:

Հայ իրականությունում նկատելի է մի երևույթ, երբ կենցաղում պահպանվելով հին ավանդույթները՝ փորձ է կատարվում մշակույթի ասպարեզում ձևավորել նոր մտածողություն:

«Ազգ», «Հայկական ժամանակ» թերթերը 2000-2003թթ. Հրապարակումներում բազմիցս անդրադարձել են հեթանոսական ժամանակաշրջանի հայկական մշակութային արժեքներին և հատկապես կենցաղավարությանը՝ փորձելով կամուրջ նետել անցյալի ավանդույթների և ներկայիս սովորույթների միջև: Թվում է՝ նման մոտեցման պարագայում չէն ծագում հակասություններ: Մակայն հնադարյան սովորույթներից հաճախ վերցնում են ոչ թե անկետիկ կենցաղավարությունը, բացառիկ աշխատասիրությունը, այլև ցուփ և շվայտ կյանքը, ծուլությունը:

<sup>5</sup> Տե՛ս, «Հայաստանի Հանրապետություն», 1 սեպտեմբերի, 2005թ.:

<sup>6</sup> Почепцов, Г. Г. Имиджология Г.Г. Почепцов. – М.: Рефл-бук, К.: Ваклер, 2001. -704с.

Հայաստանի Հանրապետության կազմավորման վաղ շրջանում հասարակական գիտակցության մեջ տիրապետում էր այն միտումը, որ անցյալի գաղափարական բոլոր ուսմունքները դատապարտված են մոռացման: Չնայած եթե այդ ուսմունքներից շատերն էլ ստաջնային տեսքով վերակենդանացման անհրաժեշտություն չունեն, բայց այդ չի նշանակում հասարակությանը զինաթափել վե՛ն գաղափարներից, տեսականորեն հիմնավորված և գործնականում քննությունն բռնած վարքագծի նորմերից: Նման պարագայում անխուսափելի է մարդկանց հեռանալը մասնավոր կյանքի ոլորտ: Քաղաքացիական հասարակության տեսաբաններ Դ. Կոյենը և Է. Առատոն արդարացիորեն ընդգծում են «Մերկ եսասիրության վրա կառուցված քաղաքական մշակույթը չի կարող սպահովել անհրաժեշտ մոտիվացիա ոչ միայն գաղազցման, այլև գոյություն ունեցող իրավունքների, ժողովրդավարական ինստիտուտների, սոցիալական համերաշխության կամ անկախության պահպանման համար»<sup>7</sup>:

Հայկական մամուլում նկատելի չեն տեսական բնույթի հոդվածները, ուր քննության առնվե՛ն վերը նշված խնդիրները: Հասարակության զգալի մասի աղքատիկ մտավոր ներուժը չի ձևավորում հասարակական պահանջ մամուլում տեսական հիմնադրույթների քննարկման համար: Մեր բնակչությունը, լինելով միևնույն ազգային արժեքային համակարգի կրողը, տարբարածանված է մշակութային տարբեր կողմնորոշումների: Ոմանք առաջնային են համարում միայն սեփական ազգային արժեքները, հասարակության մի այլ հատված ընդգծված ուսական կողմնորոշում ունի, մյուսները արևմտամետ են և վերջապես մի հատվածն էլ, միգուցե ենթագիտակցորեն, տուրք է տալիս արևելքի մշակութին, հատկապես երաժշտությանը:

Ժամանակակից «ընտրանու» մի մասն էլ ձգտում է պատկանել այսպես կոչված «դավոսյան մշակույթին», այսինքն՝ աշխարհի առաջատար, գործարար և քաղաքական շրջանակների միջազգային մշակութին: Ինչ վերաբերում է բնակչության հիմնական զանգվածին, ապա այն ապրում է առօրյա հոգսերով և կարիքներով՝ հաճախ նվազեցնելով հոգևոր-մշակութային արժեքների նշանակությունը:

Այս ամենը հանգեցնում է նրան, որ անտեսվում է Հայաստանի պատմական, սոցիալ-տնտեսական, ազգային, մշակութային ինքնատի-

<sup>7</sup> Коен, Д., Арато, Э. Гражданское общество и политическая теория : пев. с англ. / общ. Ред. И.И. Мюрберг.- М., 2003

պությունը: Արդյունքում ճեղքվածք է առաջանում «ընտրանու» և զանգվածների միջև, որն ունի ոչ միայն սոցիալ-տնտեսական կամ կարգավիճակային, այլև քաղաքական, մշակութային և հոգեբանական բնույթ:

Ցավալի է այն, որ խոսքը գնում է ոչ թե տարբեր քաղաքակրթությունների կրողների միջև բախման, այլ մեկ միասնական էթնոսի տարբեր հատվածների միջև առաջացած մշակութային արժեհամակարգի տրոհման մասին: Այդ իմաստով հատկանշական է «Հայաստանի Հանրապետություն» թերթի «Մ տառի ողիսականը» թղթակցությունը: Հողվածագիրը նկարագրում է Հովհաննես Թումանյանի արձանից անհետացած Մ տառի ճակատագիրը, որի պատճառով աղավաղվել է մեծ քանաստեղծի ազգանունը: Երևույթը չի արժանացել օպերային հրապարակում հաճախ զբոսնող քաղաքիվ մարդկանց գնահատականին: Ավելին, «այդ մասին զրվել է մամուլում, հաղորդվել հեռուստատեսությամբ: Բայց ինչպես տեսնում ենք՝ զուր»<sup>8</sup>:

Ճշմարիտ է հողվածագրի եզրահանգումը, որ քանաստեղծի ազգանվան մեկ տառի բացակայությունը հանրության անտարբերության դրսևորում է. «Այնտեղ, ուր չեն կատարվում պարզ, անհրաժեշտ, անխուսափելի քայլեր, հնարավոր ու հավանական է դառնում ամեն բան»<sup>9</sup>:

Ժամանակակից տեսաբանները փորձում են հիմնավորել տարբեր ժողովուրդների, այդ թվում նաև մշակույթների միջև համագործակցության անհրաժեշտությունը: Այս գաղափարը տեսականորեն հիմնավորել է Ս. Խանտինգտոնը՝ շեշտը դնելով մարդկանց քաղաքակիրթ համերաշխության գործոնի վրա: Առավել ևս, որ ժամանակակից աշխարհը դառնում է ավելի փոխկապակցված, խորանում է ժողովուրդների փոխհամագործակցության ամրապնդման միտումը:

Հայաստանյան մամուլում տարբեր քաղաքակրթությունների մասին պատմող նյութերը ներկայացվում են մեկուսի, առանց ներկայացնելու նաև հայ ժողովրդի որոշակի ձեռքբերումները: Ստեղծվում է այնպիսի տպավորություն, որ անցյալի և ներկայի հայ քաղաքակրթական գործընթացները սակավ են առնչվել համաշխարհային հետ: Նման մոտեցումը հիմնավորված չէ մեր ժողովրդի քաղաքակրթական նվաճումների և առավել ևս Վենետիկի սուրբ Ղազար կղզու միաբանության և սփյուռքի մյուս գաղթօջախների կրթամշակութային

<sup>8</sup> Տե՛ս. «Հայաստանի Հանրապետություն», 31 հոկտեմբերի, 2002թ.:

<sup>9</sup> Տե՛ս. նույն տեղում:

արգասաբեր գործունեության անկայության պարագայում:

Հանրապետության թերթերում և ամսագրերում տպագրվում են նյութեր իտալական մշակույթի, նրա ձեռքբերումների մասին, նկարագրվում Վենետիկի հուշակոթողները և ոչ մի խոսք սուրբ Ղազար կղզու վերաբերյալ մոռացության է տրվում իտալական և ընդհանրապես եվրոպական մշակույթի հետ հայկականի ունեցած կապը:

Առանձնանում է «Նովոյե Վրեմյա» թերթում տպագրված հոդվածն Այվազովսկի եղբայրների գործունեության մասին: Նրանում զգալի տեղ է հատկացվում Վենետիկում և Փարիզում ապրած տարիներին ծովանկարչի ավագ եղբոր՝ Գաբրիելի կրթական և հրատարակչական գործունեությանը<sup>10</sup>: Հոդվածագիրը ներկայացնում է Իտալիայի և Ֆրանսիայի մշակութային և կրթական համակարգի ազդեցությունը Գ. Այվազովսկու աշխարհայացքի և գեղագիտական ճաշակի ձևավորման վրա: Միաժամանակ ընդգծվում է, որ Վենետիկում սուրբ Ղազար կղզու հայ կրթամշակութային օջախի և Փարիզում Մուրադյան վարժարանի անկայությունը նպաստեցին այդ երկրներում հայության նկատմամբ որպես քաղաքակիրթ ազգի վերաբերմունքի ձևավորմանը:

Ցավոք, նման բովանակությամբ նյութերը բացառություն են կազմում արդի հայ պարբերական մամուլում. այս մոտեցումն անիմաստ է զլոբալացման և եվրոպական իրթական համակարգին անցնելու փորձի պայմաններում:

XXI դարի սկզբից մեր հանրապետությունում տիրապետող է դարձել եվրոպական կրթական մոդելին տուրք տալը՝ ուշադրություն չդարձնելով նրա որոշակի խմբագրման անհրաժեշտությանը: Գրեթե նույնպիսի մոտեցում է մշակվել մշակույթի ոլորտում, որտեղ գերիշխում է ոչ թե եվրոպական դասական գրականության և արվեստների առջև խոնարհումը, այլ այսպես ասած շոու բիզնեսի գովազդը: Բավական է հիշատակել, որ վերջին տաս տարիներին «Գրական թերթը», «Էլիտար թերթը» և «Литературная Армения» ամսագիրը հետևողականորեն հրապարակախոսական և գրական-քննադատական հոդվածներ են տպագրել անցյալի և ներկայի մշակույթի օտարազգի ականավոր գործիչների հոբեյանների կապակցությամբ՝ փորձելով կրանց սսեղծագործություններում նկատել հայության հետ առնչվող երանգներ:

Իհարկե, կան հետաքրքրություն ներկայացնող առանձին հրապարակումներ, որոնց հեղինակները մշակույթի ճանաչված գործիչներ

<sup>10</sup> Տ է 'u , «Новое Время», 26 июня 2007г.



են: Այսպես, «Գոլոս Արմենիի» թերթը վերլուծական հոդված է տպագրել Դ. Մուրադյանի «Մեր հին դաշնամուրը» պիեսի վերաբերյալ: Խոհական բնույթի հոդվածում լրագրողը, կարծես դառնալով դրամատուրգի համահեղինակ, բարձրացնում է հրատապ հարցեր՝ «Ի՞նչն է հարկադրում ժողովուրդներին և մարդկանց թշնամանալ: Ինչու արժեքները գրեթե բոլոր տեղերում միանման են, իսկ շահերը միանգամայն տարբեր: Ինչն է մեզ՝ մահկանացուներին, միավորում: Եվ վերջապես, ի՞նչ է փնտրում հայ մարդն իր եւրոյունից դուրս»:

Հոդված-խորհրդածությունն ավարտվում է այսպիսի դատողությամբ: «Ըստ ծնունդի ես հայ եմ և մարդ: Ես ունեմ իմ ազգային հիշողությունը, սակայն պատրաստակամ եմ բոլորի հետ խոսելու»<sup>11</sup>:

Հանրապետության պարբերականներում նկատելի է մի իրավիճակ, երբ կինոյի և թատրոնի հիմնախելիքներին անդրադարձն առավելապես վերաբերում է այլազգի կամ սփյուռքահայ ստեղծագործողներին: Այսպես, «Արագի լավատեսական նախագիծը» ներկայացնում է կանադահայ ռեժիսոր-վավերագրող Արագ Արթինյանի ստեղծագործական գործունեությունը: Հրապարակախոսական հոդվածն ընդգրկում է փաստերի լայն շրջանակ, կինոյի հետ առնչվող խելիքները կապում շրջապատի իրականության հետ: Ավելին, անդրադարձ է կատարվում մեր ժողովրդի համար ցավալի, սակայն հավերժ ուղեկից Ցեղասպանության խնդրին: Արագը 2006 թվականին «Ոսկե Ծիրան» կինոփառատոնում ցուցադրեց «Ցեղասպանությունն իմ մեջ» ֆիլմը, որը 5 տարվա աշխատանք է պահանջել: Շրջելով Թուրքիայի, ԱՄՆ-ի, Կանադայի քաղաքներում՝ հանդիպել ու գրուցել է Ցեղասպանություն ապրած մարդկանց հետ, և այդ բոլոր հարցազրույցները կարծես «իր միջով» է անցկացրել: Օտարության մեջ գտնվող հայերի չորրորդ սերնդի ներկայացուցիչ լինելով՝ Արագն ակնարկում է, որ բոլորս էլ այս կամ այն կերպ մեր մեջ կրում ենք Եղեռնը: Նա չի էլ ցանկացել իրատես լինել, այլ՝ ընդհակառակը՝ ամեն դրվագում ընդգծել է, որ Ցեղասպանության հետևանքներն ազդել են նաև իր անձնական կյանքի ու աշխարհընկալման վրա:

Ղետաբրքական է Արագի դատողությունները հայ երիտասարդության ներկայիս վարքագծի և ապրելակերպի վերաբերյալ: Նա գրում է. «Աշխատող մարդը ներքին բարձր արագություն պիտի ունենա: Իսկ ներքին անհոգությունը վատ բան է: Ես տեսնում եմ, որ հայ աղջիկները միշտ բարձրակրունկ կոշիկներ են հագնում, իսկ դա նշանակում է, որ

<sup>11</sup> Տե՛ս, «Голос Армении», 30 ноября, 2006г.:

շտապելու տեղ չունեն ու դանդաղ պիտի քայլեն: Ես, օրինակ, միշտ վազում եմ, քանի որ գիտեմ՝ կյանքս կարճ է, ժամանակ չունեմ»<sup>12</sup>:

Արագը մտադրվել էր նկարահանել ֆիլմ այն երիտասարդ սփյուռքահայերի մասին, որոնք ուզում են հայրենիք վերադառնալ, նաև այն հայաստանյան երիտասարդների մասին, որոնք, հայրենիքում ապրելով, ուզում են թողնել այն ու հեռանալ:

Հատկանշական է, որ կանադահայ կինոռեժիսորը մայր հայրենիքում ընթերցողների հետ իր մտորումները կիսում է ոչ թե արվեստի հիմնախնդիրների, այլ առավելապես ազգային հիշողության և բարոյականության վերաբերյալ:

Աերօրյա մշակույթի հիմնախնդրի համառոտ քննությունը հնարավորություն է տալիս ձևակերպել հետևյալ եզրակացությունները.

1. Ամբողջ աշխարհում ժամանակակից հասարակության մեջ նկատելի է մշակութային գործոնների քաղաքական դերակատարման աճը: Ավելի պարզեցված ձևով այն դրսևորվում է նաև մեր հանրապետությունում:
2. Հայ իրականությունում նկատելի է մի երևույթ, երբ մշակույթի ասպարեզում փորձ է կատարվում ձևավորել նոր մտածողություն:
3. Մշակույթի հարցերին նվիրված արդի հրապարակախոսական նյութերը հիմնականում արտացոլում են մեր հանրապետության առօրյա կյանքը: Նրանք հաճախ չունեն անհրաժեշտ տեսական հիմք արդի հիմնահարցերի համակողմանի քննության համար: Անհրաժեշտ տեսական հիմնավորումներից զուրկ են նաև մեր ժողովրդի՝ անցյալում ստեղծած մշակութային ժառանգությանը նվիրված մամուլի անդրադարձը: Հաճախ էլ այդ հրապարակումներում չի ընդգծվում անցյալի և ներկայի մշակութային արժեքների փոխկապակցվածությունը: Տեղին է հիշել Վ. Գյուլչևևու խոսքերը. «Անցյալը պետք է գիտենալ ոչ թե այն բանի համար, որ նա անցյալ է, այլ նրա համար, որ հետանալով նա իր հետ չի տանում հետևանքները»:
4. Հայկական պարբերականներում զեալով նվազում են մշակութային ոլորտի հրապարակախոսական նյութերը: Տպագրվածի մեծ մասն էլ կրում է ավելի շատ տեղեկատվական, քան վերլուծական բնույթ: Այս երևույթը բացատրվում է ոչ միայն մամուլի թերացմամբ, այլև մշակութային թեմատիկայով հրապարակումների նկատմամբ հասարակության հետաքրքրության նվազմամբ:

<sup>12</sup> Տե՛ս, «168 Ժամ», 19-20 հունիսի, 2008թ.